

## ՆՈՈՍՖԵՐԱ՝ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏ

XX դարում մարդն ավարտեց Երկիր մոլորակի աշխարհագրական քարտեզը, զբաղեցրեց նրա ցամաքային ողջ մակերևույթը: Մարդկությունը գիտության ու տեխնիկայի նվաճումների շնորհիվ դարձավ մեկ ամբողջություն: Երկրի վրա չկա մի հողակտոր, որտեղ մարդը չկարողանա ապրել, եթե դա իրեն անհրաժեշտ լինի: Ռադիոյի և հեռուստատեսության, հզոր տեխնոլոգիաների շնորհիվ մարդը կարող է ակնթարթորեն հաղորդակցվել մոլորակի ցանկացած կետում բնակվող մարդկանց հետ: Այս ամենը, ըստ Ջեյմս Դանայի (1813-1895 թթ.) ցեֆալիզացիայի, մարդկային զարգացած ուղեղի արդյունքն է: Նա գտնում էր, որ կենդանի նյութի պատմական զարգացումը ընթացք է որոշակի ուղղությամբ, այն է՝ ցեֆալիզացիայի ուղղությամբ: Այդ եզրակացությանը նա եկավ 1838 թ. իր շուրջերկրյա ճանապարհորդության ընթացքում: Ինչպես պատկերավոր ներկայացրել է տնտեսագետ Լ. Բրենտանոն, եթե յուրաքանչյուր մարդու հատկացվի 1 քառ. մետր տարածություն, ապա աշխարհի ողջ մարդկությունը կզբաղեցնի Բավարիայի և Շվեյցարիայի սահմանում գտնվող Բադեն լճի մակերեսը: Երկրի մակերևույթի մնացած մասը ազատ կմնա մարդկանցից: Ահա թե ինչպիսի մաս է կազմում ամբողջ մարդկությունը մոլորակի նկատմամբ: Սակայն նրա հզորությունը պայմանավորված է ոչ թե նրա ընդհանուր զանգվածով, այլ նրա ուղեղի ու բանականությամբ պայմանավորված նրա գործունեությամբ: «Պատմական պրոցեսը մեր աչքի առաջ արմատապես փոխվում է: Մարդկության պատմության մեջ առաջին անգամ ժողովրդական զանգվածների՝ բոլորի և յուրաքանչյուրի շահերը և անհատի ազատ միտքը պայմանավորում են մարդկության կյանքը, հանդիսանում են արդարության մասին նրա պատկերացումների չափանիշը: Մարդկությունը ամբողջովին վերցրած դառնում է հզոր երկրաբանական ուժ: Եվ նրա առջև, նրա մտքի և աշխատանքի առջև ծառանում է կենսոլորտի վերակառուցման խնդիրը՝ ի շահ ազատ մտածող մարդկության՝ որպես մեկ ամբողջություն», - գրում է Բրենտանոն<sup>1</sup>:

Կենսոլորտի այդ նոր վիճակը «նոոսֆերան» է՝ բանականության ոլորտը (հուն. noesis - բանականություն):

«Նոոսֆերա» հասկացությունը առաջարկել է ֆրանսիացի փիլիսոփա Է. Լերուան (1927թ.): Նա նոոսֆերա անվանեց Երկրի թաղանթների այն ոլորտը, որն ընդգրկում է մարդկային հասարակությունն իր արդյունաբերությամբ, լեզվով և բանական գործունեության այլ տեսակներով: Նոոսֆերան գալիս է փոխարինելու կենսոլորտին: Այդ հասկացությունը հետագայում զարգացրեց Պ. Թեյար դե Շարդենը «Մարդու ֆենոմենը» գրքում: Ըստ նրա՝ նոոսֆերան, «...մտածող շերտ է, որը, ծնվելով երրորդական ժամանակաշրջանի վերջում, մինչև այժմ տարածվում է բուսական և կենդանական աշխարհների վրա՝ կենսոլորտից դուրս և նրա վրա»<sup>2</sup>: Ըստ Թեյար դե Շարդենի՝ այն կոլեկտիվ գիտակցություն է, որը կսկսի կառավարել մոլորակի էվոլյուցիայի ուղղությունը և բնության հետ կմնա Օմեգա կետում: «Մենք անընդհատ հետևում ենք միևնույն հսկայական պրոցեսի հաջորդական փուլերին: Ի դեմս երկրաքիմիական, երկրատեկտոնական, երկրակենսաբանական տրոփումների միշտ կարելի է նկատել միևնույն զլորալ պրոցեսը, այն է՝ նյութական առաջին բջիջից մինչև նյարդային համակարգ: Երկրագեները, մենք ասացինք, անցնում է կենսագեներգի, որը վերջին հաշվով ոչ այլ ինչ է, եթե ոչ փսիխոգեներգ...: Փսիխոգեներգը հանգեցրեց մարդու ծագմանը: Այժմ փսիխոգեներգն ուրվագծվում է, փոխվում և կլանվում է ավելի բարձր գործունեությամբ. նախ հոգու ծնունդով, հետագայում նրա զարգացմամբ՝ նոոգեներգով: «Նոոսֆերա» հասկացության բուն էությունը հավատն է մարդու կոչման նկատմամբ, որը պետք է փոխի կենսոլորտը գիտության և տեխնիկայի օգնությամբ», - գրում է դե Շարդենը: Ընդունելով, որ

<sup>1</sup> Горелов А. А. Концепция современного естествознания. Москва, 2000, стр. 487.

<sup>2</sup> Тейяр де Шарден. Феномен человека. Москва: Прогресс. 1965, №дд.181.

նոսֆերան մարդկության կոլեկտիվ գիտակցության շնորհիվ առաջացած մոլորակի ինֆորմացիոն դաշտն է, Վ. Վերնադսկին այդ հասկացության մեջ դնում է իր պատկերացումները, որը տարբերվում է նախորդ մեկնաբանություններից: Նրա համար նոսֆերան կենսոլորտի զարգացման օրինաչափ փուլն է, որի ժամանակ մարդկային բանականությունը դառնում է համամոլորակային ուժ և, հաշվի առնելով կենսոլորտի օրենքները, կարող է վերափոխել երկրի դեմքը՝ մարդու պահանջներին համապատասխան: *«Նոսֆերան,- գրում է Վ. Վերնադսկին,- այնպիսի մի վիճակ է, որտեղ պետք է դրսևորվի մարդու բանականությունը և նրանով կարգավորվող աշխատանքը որպես աննախադեպ երկրաբանական ուժ... Հազարամյակների ընթացքում նախապատրաստված կյանքի նոր վիճակը, որի մասին երազում էին ուտոպիստները, կդառնա իրականություն, երբ պատերազմները, այսինքն՝ կազմակերպված սպանությունները, երբ սովն ու թերսնունը կարող են համեմատաբար արագ վերանալ մեր մոլորակից: Դա որոշակի առումով կախված է մեզանից յուրաքանչյուրից: Մենք պետք է դա հասկանանք ու գիտակցենք»<sup>3</sup>:*

Ընդունելով, որ աշխարհը բաղկացած է բազմաթիվ փոխկապակցված կառույցներից, որոնցից մեկի փոփոխությունը հանգեցնում է մյուսների փոփոխմանը, կարելի է ասել, որ մարդու գիտակցությունը որպես այդպիսի մի կառույց խիստ կարևոր գործոն է դառնում գլոբալ փոփոխությունների պրոցեսում: Այս պարագայում խիստ կարևորվում են շրջապատող իրականության նկատմամբ մարդկության վերաբերմունքի բարոյական խնդիրները: *«Մարդկությունը որպես կենդանի նյութ մշտապես կապված է երկրի որոշակի երկրաբանական թաղանթի, նրա կենսոլորտի նյութաէներգետիկական պրոցեսների հետ: Այն չի կարող ֆիզիկապես նրանից անկախ լինել ոչ մի բոլոր»*, - նշում է Վ. Վերնադսկին:

Միևնույն ժամանակ մարդկությունը զարգացած սոցիալական համակարգ է, որը միջավայրի նկատմամբ ունի ոչ միայն կենսաբանական, այլև սոցիալական պահանջներ, տեխնիկական, կենցաղային, մշակութային պահանջումներ, որոնք անընդհատ աճում են՝ շատ անգամ գերազանցելով մարդու կենսաբանական պահանջները (սպառողական համակարգ): Դա հանգեցնում է կենսոլորտում գոյություն ունեցող սննդային կապերի խախտմանը, որն էլ իր հերթին՝ նյութերի շրջանառության դիսբալանսին: Միակ ուղին տեխնոսֆերայից իրական նոսֆերային անցնելն է, մարդկանցում նոր մտածողություն մշակելը, մտածողություն այն մասին, որ մեզ շրջապատող աշխարհում ամեն ինչ փոխկապակցված է, որ ամեն ինչ խիստ հավասարակշռված է ու շատ ներդաշնակ, որ կենդանի նյութը սերտորեն կապված է կենսոլորտի ոչ կենդանի՝ քարացած նյութի հետ որպես մեկ ամբողջություն: Վ. Վերնադսկին նոսֆերայի առաջացումն անխուսափելի էր համարում, որն, ըստ նրա, բխում է կյանքի զարգացումից և հանդիսանում է կյանքի շարունակության միակ հնարավոր ուղին նրա զարգացման մարդկային, սոցիալական փուլում: Նա այն համարում է մարդկությունը միավորող տարածություն, որտեղ համադրվում են երկրների և ժողովուրդների, բնության ու հասարակության շահերը, գիտական ներուժն ու քաղաքականությունը: Նա այդ ոլորտը դիտարկում էր որպես բնական կենսաերկրաքիմիական շրջապտույտում մարդու ուժեղացող միջամտության գլոբալ գիտակցում, որը կհանգեցնի այդ ոլորտում մարդու ավելի հավասարակշռված և նպատակաուղղված հսկողության: Նոսֆերա ասելով նա հասկանում էր ոչ թե կենսոլորտից դուրս ինչ-որ բան, այլ որպես նրա զարգացման նոր ոլորտ, մարդու և բնության փոխհարաբերության կարգավորման խելամիտ ոլորտ:

Նոսֆերան մեր մոլորակի վրա երկրաբանական նոր երևույթ է, որտեղ մարդն առաջին անգամ դառնում է խոշորագույն երկրաբանական ուժ: Նա կարող է և պետք է իր աշխատանքով և գիտակցությամբ վերակառուցի իր կյանքի ոլորտը՝ նախկինը արմատապես վերակառուցելով: Նրա առջև բացվում են ստեղծագործական նորանոր լայն հնարավորություններ: *«Կենսոլորտը իր պատմական*

<sup>3</sup> История биологии с начала XX века до наших дней. Москва, Наука, 1975, стр. 557.

զարգացման ընթացքում անցել է մի շարք երկրաբանական ժամանակաշրջաններ: Ներկայումս մենք ապրում ենք կենսոլորտի երկրաբանական պատմական զարգացման նոր ժամանակաշրջանում: Մենք մտնում ենք նոոսֆերայի փուլը: ...Այդ իմաստով մեր ապագան մեր ձեռքում է: Մենք այն բաց չենք թողնի», - նշել է Վ. Վերնադսկին:

Վ. Վերնադսկու նոոսֆերայի տեսության բարոյագիտական հիմքը նրա լավատեսությունն է և այն համոզմունքը, որ նոոսֆերայի զարգացումը չի հակասում կենսոլորտի էվոլյուցիայի օրենքներին, այլ շարունակում է դրանք: Նա զարգացնում է այն լավատեսական պնդումը, որ կենսոլորտից բանականության ոլորտ անցման պրոցեսում վճռական դեր են խաղում ոչ միայն գիտությունը, այլ նաև մարդկությունը միավորող բարոյական գաղափարները: Նոոսֆերան էլ իր հերթին բարոյական միտքն է՝ մարմնավորված գիտության ու տեխնիկայի մեջ:

Ցավով պետք է նշել, որ կենսոլորտի վերափոխման մեջ մարդկային բանականության դերի Վ. Վերնադսկու կոնցեպցիան լիովին չիրականացավ: Գիտատեխնիկական նվաճումների առաջընթացը հիրավի մեծ ուժ է մարդու ձեռքում կենսառեսուրսներից առավելագույն օգուտ կորզելու համար: Սակայն այդ բանականությունը չի բավարարում, որ այդ ռեսուրսներից օգտվելիս մարդը հակադրության մեջ չմտնի կենսոլորտի ամբողջականությունն ապահովող բնական օրենքների հետ: «Արդյունքում ժամանակակից մարդկությունը,- գրում է ակադեմիկոս Ի. Ա. Շիլովը,- օգտագործում է ահռելի հնարավորություններ հենց իր դեմ՝ խանգարելով կենսոլորտի կայունությունն ապահովող փոխհարաբերությունները, որոնք ձևավորվել են էվոլյուցիայի միլիոնավոր տարիների ընթացքում: Բարոյական ամայացումը վարակել է երկրների տեխնոկրատական մտածողություն ունեցող կառավարիչներին, ինչը հանգեցրել է համամարդկային չափանիշներով մտածելու նրանց ունակության կորստին: Գիտատեխնիկական առաջընթացը շատերի համար դարձել է ինքնանպատակ: Այդ պատճառով էլ հեշտությամբ ավերվում է ոչ միայն երկրի կենսոլորտը, այլ նաև նրա նոոսֆերան՝ հոգևոր արժեքները, բարոյականությունն ու մշակույթը: Նոոսֆերան որպես կազմակերպվածության որակապես նոր ձև, որն առաջանում է բնության և հասարակության փոխհարաբերության ժամանակ, այժմ մեզ ներկայանում է ոչ միայն որպես Վ. Վերնադսկու վեհ երազանք, այլ նաև որպես ահեղ ու գործնական անհրաժեշտություն: Մենք կամ կկարողանանք ստեղծել բանականության ոլորտ, որտեղ հասարակությունը կհամագործակցի բնության հետ և ոչ թե կհակադրվի նրան, կամ երկրային քաղաքակրթությունը «կխտանվի» տիեզերական էվոլյուցիայի կողմից: Այս երկրնորանքը ամենագործնական ձևով, բնօգտագործման մարտավարության միջոցով պետք է լուծեն ներկայիս սերունդները»:


Վ. Վերնադսկին, ժամանակին գրելով, որ «գիտական միտքը չի կարող հանգեցնել ինքնաքայքայման ու մարդկության կործանման», սխալվում էր, քանի որ գիտությամբ, տեխնիկական հնարավորություններով զինված ու իշխանություն ունեցող բարոյազուրկ մարդիկ դա կարող են անել:

Ակադեմիկոս Վ. Պ. Կազնաչենը գրում է. «Դիալեկտիկական մատերիալիզմի տեսանկյունով կեցությունն է որոշում գիտակցությունը: Բայց ստացվում է, որ իրականում ճիշտ հակառակն է՝ Տիեզերքում գիտակցությունն է որոշում ու պայմանավորում ամեն ինչ: Բոլոր մարդկանց (երևի ոչ միայն մարդկանց, այլ նաև կենսոլորտի բոլոր կենդանի տարրերի) համընդհանուր գիտակցությունը կազմում է մոլորակի ինտելեկտը: Այսինքն՝ մեր մոլորակը պետք է դիտել որպես կենդանի տիեզերական գոյացություն, որն օժտված է տիեզերական գոյացությունների պարտադիր հատկանիշով՝ ինտելեկտով: Իսկ մոլորակի ինտելեկտը երկրի բնակչության միացյալ, բանական, մտահոգևոր գործունեությունն է մոլորակի տեխնիկական, երկրաբանական, աստղաֆիզիկական վերափոխում-

ների բարդ փոխազդեցությունների պայմաններում»<sup>4</sup>: Գիտակցության և կեցության կապվածությունը առավել դիպուկ ձևակերպել է Գարեգին Նժդեհը. «Առանց կատարյալ գիտակցության՝ ի՞նչ կատարյալ կեցություն կարող է լինել: Պիտի գիտակցություն ունենա՞ս, որ քո գիտակցության համապատասխան կեցություն ստեղծես: Բնականաբար, ցածր գիտակցության ստեղծած կեցությունն էլ ցածր կլինի»<sup>2</sup>:

«Մարդկությունը ներկայումս կանգնած է ճամփաբաժնին, նրա առջև կա երկու ճանապարհ. մեկը, օգտագործելով դեռևս չսպառված հոգևոր ներուժը, հենվելով գիտատեխնիկական նվաճումների վրա, նպաստել մարդկանց նյութական բարեկեցությանն ու բնության հետ նրանց ներդաշնակ ֆիզիկական և հոգևոր զարգացմանը: Մյուս ճանապարհը՝ մի կողմ նետել մարդկության կողմից մշակված բարոյական սկզբունքները, կիրառելով գիտության և տեխնիկայի նվաճումները, նպաստել մի խումբ մարդկանց հարստացմանը՝ մեծամասնության աղքատացման և թշվառացման հաշվին, ավերել բնությունը, որը վերջ ի վերջո երկրի նոստիքերան կվերածի նեկրոսֆերայի (հուն. nekros՝ մահացած)»<sup>5</sup>:

Թե ո՞ր ուղղությամբ կընթանա համաշխարհային քաղաքակրթության զարգացումը՝ դեպի նոստիքայի թե նեկրոսֆերայի ձևավորում, ըստ Ն. Ա. Աղաջանյանի<sup>6</sup>, կախված է որոշակի հանգամանքներից: Դա ցույց է տրված հետևյալ սխեմայում:



Նոստիքեր և նեկրոսֆերա (ըստ Ն.Ա. Աղաջանյանի, 2001)

<sup>4</sup> Казначеев В. П. Проблемы живого космического пространства. // Интеллект планеты как космический феномен. Новосибирск, 1997, стр. 9.

<sup>2</sup> Ոսկանյան Ս., Հոգևոր Նժդեհը, Երևան, «Լուսաբաց», 2008, էջ 95:

<sup>5</sup> Агаджанян Н. А., Горожанин Л. С. Вступая в XXI век: кризис культуры и интеллигенция. Иваново-Москва, 2005., стр. 20.

<sup>6</sup> Աղաջանյան Ն. Ա. (ծնվ. 1928 թ.) - բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ, Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի և Էկոլոգիական ակադեմիայի իսկական անդամ:

Որոշ գիտնականներ նոստալիան անվանում են բիոկոմպյուտեր՝ կենսահամակարգիչ, որտեղ կենտրոնացված է մարդկության մասին եղած ամբողջ ինֆորմացիան: Բայց ավելի ճիշտ կլիներ Տի-եզերքը համարել մի հսկա կոմպյուտեր կամ «գերկոմպյուտեր, որը ղեկավարում է բոլոր տարրական մասնիկները, ատոմները և մոլեկուլները, ինչպես նաև նրանց փոխազդեցությունները տորսիոն դաշտերի և վիրտուալ մասնիկների օգնությամբ»<sup>7</sup>:

Դա նշանակում է, որ մարդկության կողմից ստեղծված և դեռևս շարունակական զարգացման պրոցեսում գտնվող բանականության ոլորտը՝ նոստալիան, հակադարձ կապի սկզբունքով ղեկավարում է մեզ կամ ավելի ճիշտ վերադարձնում է այն, ինչ մենք ամենօրյա գործունեության արդյունքում ներդնում ենք այնտեղ՝ սեր կամ ատելություն: Դրա համար է ասվում. «Չանձեր կուտակեք ոչ թե երկրի վրա, այլ երկնքում...» (նկատի ունենալով բարիք գործելը, բարին խորհելը, շրջապատում փոխադարձ սիրո ու հանդուրժողականության մթնոլորտ ստեղծելը):

«Մարդկության գոյատևման, համաշխարհային քաղաքակրթության առաջընթացի և առողջ նոստալիայի ձևավորման համար 21-րդ դարում մարդկությանն անհրաժեշտ են նոր կողմնորոշիչներ, որոնք արմատապես կտարբերվեն անցյալ դարի մոտեցումներից: «Կեցությունն է որոշում գիտակցությունը» կարծրատիպի փոխարեն խիղճն ու գիտակցությունը պետք է որոշեն կեցությունը: Պետք է հրաժարվել «մարդը բնության թագն ու պսակն է» մտայնությունից՝ առաջ քաշելով «Երկրի ու ամբողջ քաղաքակրթության թագն ու պսակը Բնությունն է» բանաձևը: Բնության հարստությունը ազահորեն թալանելու ու ոչնչացնելու փոխարեն պետք է հոգատար վերաբերվել Մայր բնությանը՝ մեր կերակրողին, ապրել նրա հետ խաղաղ ու համերաշխ: Իրենց գործունեության ընթացքում մարդիկ պետք է առաջնորդվեն մարդասիրությամբ, բարձր բարոյականությամբ, մերձավորի նկատմամբ սիրով, կարեկցանքով ու մեծահոգությամբ: Գիտությունը մաս-մաս բաժանած նեղ մասնագիտացումների փոխարեն պետք է միավորել, բժշկականսաբանական ու սոցիալական բոլոր գիտությունները: Միայն հոգևոր-բարոյական բարձր մակարդակը կառողջացնի հետընթաց ապրած Մարդուն և Բնությանը: Չետ նայելով անցյալին՝ պետք է գլուխներս խոնարհենք, իսկ ապագային նայելով՝ թևերը քշտենք ու աշխատենք»<sup>8</sup>: Նեկրոստալիայից խուսափելու և առողջ նոստալիա կերտելու այս դեղատոմսն է առաջարկում քաղաքակրթության ապագայով մտահոգված մտավորականը՝ Ն. Ա. Աղաջանյանը: Նրա միտքը լրացնում է Կ. Վ. Սուդակովը. «Մեր կարծիքով մարդն ստեղծվել է, որպեսզի մշակի և հարստացնի Վերին համակարգերը: Բայց մշակել, բնականաբար, ինֆորմացիոն, հոգևոր մակարդակներում: Չարցրեք՝ ինչո՞ւ: Տիեզերական նոր համակարգեր ստեղծելու համար: Եվ մենք, առանց դա գիտակցելու, ստեղծում ենք: Դա մեր թաքնված էվոլյուցիոն աշխատանքն է: Պատկերավոր ասած՝ ստեղծվում է «համընդհանուր՝ գլոբալ, տիեզերական ուղեղ»: Դա նշանակում է նաև՝ երկրի վրա մարդու հոգևոր զարգացման անհրաժեշտություն, որը հնարավոր է միայն գիտակցության էվոլյուցիայի ճանապարհով»<sup>9</sup>:



Բովանդակություն

<sup>7</sup> Акимов А. Е. Эвристическое Исуждение проблемы поиска новых дальнедействий EGS концепции. // Сознание и физический мир. Вып. 1. Москва, 1995, стр. 74.

<sup>8</sup> Агаджанян Н. А., Горожанин Л. С. Вступая в XXI век: кризис культуры и интеллигенция. Иваново-Москва, 2005, стр. 30.

<sup>9</sup> Каленкин С. Космос как смысл бытия. // Наука и религия. № 8. 2000, стр. 6.